ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

---

« 07 » նոյեմբեր 2024թ. No 6099 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 19-րդ հավելվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N EL/01/2823-24 առ 01.11.2024թ. փորձագիտական եզրակացությունը և N EL/01/2877-24 առ 05.11.2024թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1.Ընդունել Եվրասիական տնտեսական միության գրանցման ընթացակարգով գրանցված 2 դեղի հետգրանցումային փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաղրյանին՝

1) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, լիազոր մարմնի հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

4. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի վերաձևակերպված հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի նոյեմբերի «07» - ի N 6099 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության գրանցման ընթացակարգով գրանցված դեղերի գրանցման հավաստագրի վերաձևակերպում պահանջող հետգրանցումային փոփոխությունների ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն առ 28.02.2019 որոշման

| ՀՀ | Փոփոխության տեսակ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | IA և IB | Տանտում Վերդե | բենզիդամին (բենզիդամինի հիդրոքլորիդ) | ցողաշիթ տեղային կիրառման | 0,255մգ/դեղաչափ; 30մլ (176 դեղաչափ) պլաստիկե տարա դեղաչափիչ մխոցով | Ազիենդե Քիմիքե Ռիունիտե Անգելինի Ֆրանչեսկո Ա.Ք.Ռ.Ա.Ֆ. Ս.պ.Ա., Վիա Վեկիա դել Պինոկիո, 22-60100 Անկոնա | Իտալիա | Ազիենդե Քիմիքե Ռիունիտե Անգելինի Ֆրանչեսկո Ա.Ք.Ռ.Ա.Ֆ. Ս.պ.Ա., Վիալե Ամելիա, 70, Հռոմ | Իտալիա | ԱԴ | 000747 31.10.2024 |
| 2 | IA, IB և II | Դետրալյուկտ | լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ մոնոհիդրատ), ֆլուոցինոլոնի ացետոնիդ | նրբաքսուք ուղիղաղիքային | 21,2մգ/գ+0,1մգ/գ; 15գ ալյումինե պարկուճ և ներդրուկ | Գալենիկա Ֆարմասյուտիկալ ինդուստրի Ս.Ա, 14568, Ասկլիպիոու 4-6, Կրյոների, Ատտիկի | Հունաստան | Սերվիե ԲՇ, 125196, Լեսնայա փ. 7, հարկ 7/8/9 Մոսկվա | Ռուսաստան | Դ | 000915 31.10.2024 |